

սեր հետ առանձին տեսակցութեան ընդունուելէ ետեւ՝ լիվաթիա գնաց։

Մատրիա 24 հոկտ. Գանի մը զօրավարը ընկերական դաւադրութեան մը մէջ մատ ունենալուն պատճառաւ բանտարկեցան։ Հիւսիսային ժողովրդաց մէջ յուզմունք մը ծագած է։ Պէրլուտ 23 հոկտ.

Հոս եկող ռուս կամաւորացի թիւը քանի մ'օրէ 'ի վեր նուազած է։ Պէրլին 23 հոկտ.

Ազատամարտ մասը Ռուսիոյ դիտաւորութեանց նպաստաւոր քաղաքականութեան դէմ է։

Բ.Մ. Բոնա.	10 13/4
Քոնի	1865 12
»	1869 11 1/4
»	1871 27 1/2
»	1872 18 1/4
»	1873 11
Եղիպտ.	40 5/8
Անգլ. Բոնա.	94 7/8

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն Օսմանիէի ակաւնակուռ պատուանշանը չնորհեց Նիշի բանակին հրամանատար Ահմէտ Լյուպ փաշային։

Խնչպէս որ ծանուցեր էինք, մայրաքաղաքիս Ռուսական դեսպան իկնաթիւնի զօրավարն երեքշաբթի օրը հանդիսեւ կայսերական պալատն երթալով, իւր դեսպանութեան նոր վրկայագրերը վեհ. Սուլթանին մատուցցուցաւ։ Իկնաթիւնի զօրավարն յառաջիկայ չարթթ օրն առանձին տեսակցութեան պիտի ներկայանայ վեհ. Սուլթանին։

Երէկ Մեծ—Եպարքոսն երկար տեսակցութիւն մ'ունեցաւ վեհ. Սուլթանին հետ։

Կայսերական կառավարութեան դէմ կազմուած դաւակցութեան անդամներն հետզհետէ ձերբակալ կըլլան և կաքոնուին։

Սորեններէն զատ ուրիշ վեց անձինք ալ աքսոր զրկուեցան, որոց անուանքըն են, Սալիթ Էֆէնտի, Թանթուրի Հասան Էֆէնտի, Երիզիքերլի Մուսթաֆա Էֆէնտի և անոր սպասաւորը Մուսթաֆա, Հաճի Լալին Էֆէնտի և Գեամիլ Էֆէնտի։

Կըսուի թէ այս դաւադիրներուն մէջ 65 տարեկան Հոճա մ'ալ կայ, որ անցեալները 17 տարեկան կնոջ մը հետ ամուսնացեր, և անոր խնդրած գոհարեղէնները չկրնալով զատալ, երկու ասուր մէջ 1000 հատ ռուսական բոլ իմիւրեւալ ոսկի կըցեր է ձեռք բերել։ Այսպիսի բոլ իմիւրեւալ մայրաքաղաքիս պանքաներուն մէջ դիւրաւ չկրնար գտնուիլ այս միջոցիս։

Երեքշաբթի օրն ալ հրաժարեալ Սուլթան Մուրատայ պալատէն տասներկու անձինք ձերբակալեցան, որոց մէջ կը գտնուին կայսերական կանանցին նախորդ վերատեսուչ Թուֆալ Սուլթան Էֆէնտի, և Սուլթան Մուրատայ սենեկակցեաներէն Սայիտ պէյ և Բայիֆ Էֆէնտի։ Ասանք Սուլթան Մուրատի գահազրկութեան ըստ օրինի պատճառ եղող ծանուցեալ հիւանդութեան վրայ սուտ լուրեր հնարելով հասարակաց միաքը կը չփոթեն եղեր։

Սակայն լրագրոյս մամուլը դըրուած վայրկենին կիմանաւ թէ Թուֆալ Սուլթան Էֆէնտիէն զատ՝ միւս ձերբակալեալներն արձակուել են։

Վեհ. Սուլթանն 7500 զրչ ամառական թոշակ կապեց ցկեանս՝ նախորդ Սուլթան Մուրատայ բժիշկ Տըքթոր Բաբուլթոն Էֆէնտիին և 500 լիւր պարգև տուաւ Տըքթոր Մուհմէտիին։

Ահաւասիկ Սուլթան Մուրատ Երեքշաբթի Սուլթան համար Բարձր, Շէյխիւլ-Խայամ Էֆէնտիի տուած ֆէթիւային թարգմանութիւնը, զոր երեքշաբթի առուր Լաթիփ քիլի և Լէվնէթ Հէրլուի մէջ հրատարակած կը տեսնենք։

«Եթէ հաւատացելոց հրամանատարը խեղադարձութիւն ունենայ և իւր պաշտօնը չկրնայ կատարել, պէտք է որ գահընկէց լինի։»

«Պատասխան.—Այո։ Գրեաց խոնարհ ՀԱՍՍԱՆ ԽԱՅՐԱՒԱԼԱՅ

«Աստուած ներում չնորհէ իրեն և»

Գանի մ'օրէ 'ի վեր զրոյց մ'երած էր թէ Եամպուլի մէջ չէրքէզները ջարդ տուել են քրիստոնէից։ Մեծ—Եպարքոսն հեռագրով տեղեկութիւն խնդրեց Սիմիայի կառավարչէն և պատասխան ստացաւ թէ բընաւ որ և է անկարգութիւն մը պատահած չէ յիշեալ քաղաքին մէջ։ Հետեւաբար պարտած զրոյցն անհիմն է։

Կերէի որ այս զրոյցին պատճառ տուելէ, կըսէ Լէվնէթ Հէրլու, Էսքի Չաղրայի և Բարլուֆի մէջ Պայրաւին առաջին օրը պատահած մանր մունր կռիւներ, որք դեռ չմեծցած չուտով զսպուել են Ադրիանուպոլսէն զըրկուած զօրաց ձեռքը։

Թիֆլիզէն եկած հեռագրեր լուր կուտան թէ ամսոյս 11/23 ին դիշերը քանի մը մարդիկ թիֆլիզի Օսմանեան հիւպատոսարանը մտնելով, հիւպատոս Պէհմէթ Էֆէնտին (որ յոյն էր) և կինն սպաններ են։

Այս սոսկալի ոճրին շարժառիթն յայտնի չէ։

Ռուսիոյ կառավարութիւնն՝ այս եղեւնագործութեան լուրն առնելուն պէս՝ ստասիկ հրամաններ զրկեր է կովկասեան իսխանութեան և ռազմորդներն անպատճառ փնտաեն գտնեն։

Յիշիպէն գրուած նամակներ լուր կուտան թէ Պուլլարիոյ թշուառաց օգնութիւն մատակարարելու նպատակաւ Անգղիայէն յատկապէս Արեւելք եկող Սթրանկֆորտ դերալիմուհին, մայրաքաղաքէս Յիշիպէ հասած ժամանակ, երկաթուղոյն կայարանէն իւր բռնած տուներ տանելու համար վեճ ծագեր է Թուրքաց և Պուլլարաց մէջ, և վերջապէս Թուրքերն յաջողեր են դերալիմուհուհոյն կառքին չուրջը պատուակալ պահպանաց խումբ մը կազմելով յաջողականաւ իւր բնակարանը տանիլ։

Կարինէն մայրաքաղաքիս Բուռիէ տ'Օրիան լրագրին գրուած նամակէ մը գոհութեամբ կիմանաւ, թէ Կարնոյ վսեմ. կուսակալին թիկնապահներէն մին, որ քննութիւն մ'ընելու համար վան զրկուել էր, Կարին դարձեր է՝ հետը բերելով չորս քիւրտ պէյեր, որք ամեն տեսակ չարութիւն գործելէ ետեւ Պարսկաստան փախչելու կը պատրաստուէին։

Նէօքոյոս լրագրերը կը ծանուցանէ թէ Պ. Պէյրինկի տեղեկագրին մէջ նշանակեալ Ֆէրիդ Շէյվէթ փաշան, որ Պուլլարիոյ Եամպուլի քաղաքին մօտերը գործուած ծայրայեղութեանց իբրեւ գրգռիչ ամբաստանուած է, մայրաքաղաքէս գաղտնաբար փախչելով Պերճիս գնացեր է։

Յաւելով կը ծանուցանենք թէ Արարատ, Հայրենիք և Մեծմուսյը Հաճախի թերթերն երեքշաբթի օրը Բ. Գրան հրամանաւ խափանե-

ցան, Տրապիզոնէն գրուած նամակի մը հրատարակութեան պատճառաւ։ Նոյն օրը յիշեալ թերթերուն խմբագիրները Բ. Գրուը կանչուելով, անկէց ալ ոստիկանութեան դուռը զրկուեցան*, ուր մէկ երկու ժամ բանտարկուելէ ետեւ՝ իրիկունը երաշխաւորն անուկելով արձակուեցան։

Նմանապէս Ռըվիւ տը Գոնթթանթի թիւորը անուն գաղղիներէն հանդէսն, և Մոմոս անուն Յոյն ծաղրաթերթը խափանեցան։

Արարատայ տէր և հրատարակիչ Այվատեան Մատթէոս Էֆէնտին հետեւալը զրկած է մեզ 'ի հրատարակութիւն։

... Խմբագիր. Տպագրական տեսութեան հետեւալ հրամանագրով Արարատ խափանեցաւ։

«Արարատ զադէթաք» Տէօվէթը Ալլիէնին թէպայը ստորագրեալ տան պուրունան Էրմէնի ճէմաթընըն թախտիչի Էզհանընը մուհիւ պարահիֆ նէշը իթմէքտէ օլտըղնաան, մէքըիւր զադէթա պու կիւնտէն իթիպարէն պիւլ քիւլլիէ ֆէսիլ վէ իլլալ օլընմըշ տըր։» Միւտիլի 6 շէվվալ 93 վէ մաթպուլաթ 12 թըրնի Էվվէ 92 ՊԱՐ

Մեր ընթերցողաց և բաժանորդաց ներումը կը խնդրեմք առ այժմ։ 13 հոկտ. 1876 Մ. Մ. Աճաթեան Կ. Պոլիս

ԱՌՍՏԱՆԻՍԻՍ	
ԵՍԱՅԱՐԸ ՈՒՍՈՒՄԻՆ	
13 հոկտ. չորեքշաբթի իրիկուն	12, 34
14 հոկտ. հինգշաբթի առաւօտ	12, 32
բացուեցաւ	12, 30
Ժամ 6 ին	
Կ. Պոլիս 13 հոկտեմբեր	
Պէրլուտ 13 հոկտեմբեր	2 9
« Գոնթթանթի Էրմէն »	4, 20
Կ. Պոլսոյ Պանդային »	3,
Քրէտի ժէնէրալ »	2, 10
Քրէտի Սթրանկֆորտի թիւրք	
Կիւլաթուրիաց »	35
Քոնի. 1863 »	70
» 1865 »	70
» 1869 »	59
» 1872 »	20 1/2
» 1873 »	58
Թրախալ »	90

ԸՆԹԱՅԲ ԴԵՍՄՈՑ	
13 ՀՈԿՏԵՄԲԵՐ	
Անգլ. լիւր »	110 25
Նախընտ. ուկի »	87 37
Իմպերիալ Ռուս »	88 20
Դերբի »	51 20
Հնգ ֆրանք »	
Հինգ ֆրանք »	107 20
Պլինն »	143

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

ՀՐԱՒԻՐ ԱՌ. ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍԺՈՒՄՆՍ

Ազգային ժողովը նիստ ունի յառաջիկայ ուրբաթ հոկտ. 13 'ի Ղալաթիա։

Ատեանը պիտի բացուի ճիշդ ժամ 6 ին և գոցուի 10 ին։

Հրաւիրեալ են Երեսփոխան Էֆէնտիներն՝ իրենց ազդասիրական պարտականութիւնը կատարելու փութալ։

12 հոկտ. 1876 'ի Պատրիարքարանի Հայոց Կ. Պոլիս

ՊԱՏՐԻԱՐԿ Կ. ՊԱՐՈՑ ՆԵՐՍԵՍ ԱՐԲԵՂԻՍԿԱՊՈՍ

* Կըսուի թէ Արարատայ խմբագիր Այվատեան Մ. Էֆէնտին և Մեծմուսյի Հաճախի խմբագիր Մարգարեան Բոհանէն Էֆէնտին թեւերին ետեւին կապուած տարուել են ոստիկանութեան դուռը։

ՕՐԱԿԱՐԳ

1. Վերաքննութիւն Սահմանադրութեան. — Շարունակութիւն վիճաբանութեան յօդուածոյ թաղային մատակարարութիւն։

Ատենադպիր Գ. Թ. ՄԵԼԷ

Բ. Դուռը գրով ազգարարեց Պատրիարքարանի որ ազգին կողմէն յատուկ քննիչ մ'որոշուի Եօղղատու մէջ ըլլալը քննութեանց մասնակցելու համար։

Ազգային վարչութեան Գաղաքական ժողովը երեքշաբթի օրը խորհեցաւ այս ազգարարութեան վրայ, բայց Ս. Պատրիարք հօր ներկայ չըլլալուն պատճառաւ վերջնական որոշում մը չկրցաւ տալ։

Միւս կողմանէ գոհութեամբ կը կարգանք երեքշաբթի առուր Մանգուլ մէջ թէ Գաղաթիւ կուսակալ վսեմ. Սիւրէա փաշան Սարը Համզա գիւղին դէպքը քննելու համար Եօղղատ գնացեր, անձամբ ստուգեր, և յիշեալ գիւղի քահանային նախատինք ընող Սորմուհի միւտիլին և անոր յանցակից գտնուող Լուիֆի պէյն՝ որ տեղական ժողովոյն անդամ է, պաշտօնական ըրեր, և հռչակաւոր Զիֆթի Եփրատի ալ կեսարիտէն բերել տալով բանտարկել և Էօրէնթէ ենթարկել է։

Ստեյլ Նիկողոս եպիսկոպոսն, որ ինչպէս յայտնի է՝ կաթողիկոսութեանէ ձգուելով Արմաշու վանքը զըրկուած է քանի տարիէ 'ի վեր, անցեալ չարթթու յանկարծ մայրաքաղաքս եկաւ առանց վարչութեան հրամանին, և Շահպաղեան Նաղարէթ Էֆէնտիին տուել հիւր ըլլալով, երեքշաբթի օրը քաղաքս գաղտնի ժողովը ներկայացաւ գտնադատելով թէ ինչ պիտի ըլլայ իւր վիճակը և մինչեւ երբ պիտի մնայ այս քաղաքս թշուառ վիճակին մէջ. ուստի խնդրեց որ թոյլ տրուի իրեն Սիւ երթալ, իւր գոյքերն առնուլ և հոն ունեցած գործերը կարգադրելէ ետեւ Կ. Պոլիս վերադառնալ։ Բաղաքական ժողովը խոստացաւ խորհիլ զարժանը, և պատուիրեց որ քանի մ'օր համբերէ մինչեւ որ տնօրէնութիւն մ'ըլլայ իրեն համար։

Հիմ ահապատի միաբաններէն Դաւիթ անուն վարդապետ մը՝ պատրիարքական կեղծ կնիք չինած ու գործածած ըլլալով, թէ՛ կնիքն և թէ՛ անով կնքեալ թղթերը Պատրիարքարան եկած են։

Շաբաթ առուր փունջի մէջ հրատարակուած հետեւալ տղերուն ըստուգութեանը քանի մը պատուաւոր Ադրիանուպոլսեցիք վկայելով, արժան կը համարենք հոս դնել 'ի գոհութիւն ազգին և 'ի քաջալերութիւն արժանաւոր և բանիբուն եկեղեցականաց։

«Լալիքէն եկած ճանապարհորդներ ու գրեր գովեստիք կը խօսեն Խալիլիէ առաջնորդական տեղապահ Բուսուգլըեան Արժ. Տ. Գէորգ վարդապետի վրայ, իւր գործունէութեամբն ու քաղցր բնավորութեամբը ոչ միայն մերայնոց այլև օտարազգեաց և կառավարական ամեն աստիճանի պաշտօնակալաց սիրոյն ու համակրութեան արժանացած է։ Շատ փափուկ ու կնճռոտ խնդիրներ՝ սուրա միջնորդութեամբն ու պաշտպանութեամբ կարգադրուել են 'ի մեծ գոհութիւն հասարակաց։

«Լալիքէն թէ Խալիլիէ ազգայնոց

Ի խաղ՝ զոր ծախաւոտար
Վ. Ռ. ՍՈՒՍՆ